Լաբորատոր աշխատանք

ԾԱՂԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի նպատակը: Ուսումնասիրել ծաղկի կառուցվածքը և դիտել նրա մասերը:

Անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ: Թարմ կամ չորացրած ծաղիկներ, ջուր, ունելի, ասեղ, թասիկներ, խուշորոցույց:

Աշխատանքի ընթացքը: Ուսումնասիրեք տարբեր բույսերի թարմ կամ հերբարիումային ծաղիկներ: Դիտեք ծաղկակոթը, ծաղկակալը, բաժակը և պսակը: Համեմատեք բաժակաթերթերի, պսակաթերթերի թիվը բաժակի ձևը, բաժակի և պսակի գույնը: Ունելիով հեռացրեք բաժակաթերթերը ու պսակաթերթերը և խոշորոցույցով դիտեք առէջների ձևը և կառուցվածքը, գտեք առեջաթելերը փոշանոթները, հաշվեք առէջները: Այնուհետև հեռացրեք առէջները և ուսումնասիրեք ծաղկի կենտրոնում գտնվող վարսանդը: Վարսանդի վրա գտեք սպին, սոնակը և սերմնարանը: Վարսանդի սերմնարանի կտրվածքի վրա խոշորացույցով դիտեք սերմնաբողբոջը: